ԱՐՄԱՆ ՇՈՒԽԻԿՅԱՆ

Գ. ՆԺԴԵՀԻ ՅԵՂԱԿՐՈՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Չի կարելի միաժամանակ վատ մարդ,
բայց եւ այնպէս լաւ Հայ լինել:
Այո՛, չի կարելի անկատար մարդ,
բայց կատարեալ Հայ լինել:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Գարեգին Նժդեհի տեսական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում XX դարի 30-ական թվականներին ստեղծված ցեղակրոն ուսմունքը: 1932-ին, Սոֆիայում լույս տեսնող «Խռովք» ամսագրում[1], Գ. Նժդեհը, «Հոգեւոր նորոգության խնդիրներ» խորագրի տակ, լույս ընծայեց «**Ցեղակրոնությունն իբրեւ հաղթանակի զորույթ**» հիմնադրութային հոդվածը, ուր մասնավորապես կարդում ենք. «Եթե ցայսօր մեր ժողովուրդը հարվածներ է միայն ստանում եւ անկարող է արագորեն հակահարվածել - դրա պատճառն այն է, որ նա չի ապրում ցեղորեն... Ցեղակրոնությո՛ւն - ահա՛ համադարմանը, առանց որի հայությունը կմնա մարդկության քաղաքականապես ամենատնանկ մասը»: 1933 թ. ամռանը, Նժդեհը, Ն.Յ.Դ. 12-րդ Ընդհանուր Ժողովի որոշումով մեկնեց ԱՄՆ, ուր նախաձեռնեց Ցեղակրոն շարժումը եւ այն ծավալելու համար հիմնադրեց Ցեղակրոն ուխտերը, որոնց «Ծրագիր Կանոնագիր»-ի մեջ կազմակերպության ստեղծման նպատակն ամրագրված է. «Ստեղծել ցեղակրօն սերունդ մը, որուն անդամները ապրին եւ գործեն որպէս ցեղի հպատակն ու մարտիկը, ուր որ էլ լինեն եւ ընկերային ինչ դիրք էլ ունենան...»[2]: Մինչեւ Նժդեհի ԱՄՆ գալը, այնտեղ գործում էին մի շարք երիտասարդական միություններ՝ «Հայորդիք», «Որդիք Հայաստանեայց» եւ այլն: Իրարից անջատ գործող այս միությունները համախմբելու եւ մեկ հայտարարի բերելու դժվարին գործը ստանձնեց Նժդեհը՝ ծավալելով Ցեղակրոն շարժումը, որի գաղափարախոսությունը շարադրեց 1933 թ. վերջին, Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում՝ «Ցեղային արթնություն» խորագիրը կրող հոդվածաշարով՝ ներկայացնելով նաեւ ցեղակրոնության հավատամքը: Ինչպես նշում է Ա.Սարգսյանը[3] ցեղակրոն ուսմունքի առաջացումն ու ցեղակրոն շարժման տարածումն ուներ ընդգծված գործնական միտվածություն, որի նպատակն էր գաղթաշխարհի հայության մեջ տիրող ներքին երկպառակությունների, բազմաթիվ ներքին եւ արտաքին գործոնների ազդեցությամբ էթնիկ ձուլման գործընթացների կանխարգելումը: «Հայը, - իր «Ինքնակենսագրականում» գրում է Նժդեհը, -

1 1. «Խռովք», 1932, թիվ 1, էջ 32, 36-37

2 **Ա. Բարսեղյան**, Ցեղակրոն շարժումը, Բոստոն, 1935, էջ 31:

3 **Ա. Ա. Սարգսյան,** Գարեգին Նժդեհի փիլիսոփայական հայացքները, Ատենախոսություն (անտիպ), Եր. 2004., էջ 45:

Հայաստանից դուրս ենթակայ է վարասերումի: Այդ չարիքի դէմ պայքարել հնարաւոր է միայն ցեղային արժէքների, առաքինութիւնների եւ սրբութիւնների խոր ճանաչումով ու վերապրումով, - մի բան, որ հիմնաւորեցի եւ անուանեցի Յեղակրօնութիւն: Դրա նպատակն էր՝ անհայրենիք հայութեանը հոգեւոր ու քաղաքական անտուն-անտիրութիւնից փրկելով, դարձնել հայրենատէր»[4]: Անշուշտ, Յեղակրոնությունը գաղափարական դատարկության վրա չէր ստեղծվում: Դրան նախորդել էին Ալիշանի, Ռաֆֆու, Պատկանյանի, Վարուժանի, Ահարոնյանի եւ այլոց գաղափարները: Սակայն նրանք տվել են գաղափարներ, բայց ոչ՝ գաղափարախոսություն: Նժդեհին էր վիճակված, խտացնելով ու ամփոփելով իր մեջ մինչ այդ եղած միտքը, համակարգելով ու ամրացնելով այն, հիմք դնել հայկականորեն հիմնավորված, կառուցված մի ուսմունքի, որը կոչեց Յեղակրոնություն: Յեղակրոն ուսմունքի մի շարք դրույթներ ու գաղափարներ ունեին ընդգծված գաղափարախոսական միտվածություն եւ, միեւնույն ժամանակ, Նժդեհի կողմից մանրամասն բովանդակային բացորոշման չէին ենթարկվում: Յեղակրոն ուսմունքը եւ նրանում տեղ գտած հիմնական դրույթները ազգային ինքնության, ազգային հիմնախնդիրների լուծման նպատակով համապատասխան գործունեության գաղափարախոսական ուղղորդիչներ էին, որոնք կարելի է հասկանալ Նժդեհի փիլիսոփայական աշխարհայացքի եւ ժամանակաշրջանի հայ իրականության ներկայացրած «թելադրանքների» համատեքստում: Գ. Նժդեհի տեսական ժառանգության, ցեղակրոն ուսմունքի լուսաբանման խնդրին Ա.Սարգսյանը անդրադառնում է երկակի հերմենեւտիկական մոտեցման դիրքերից, որը մի կողմից հնարավորություն է տալիս որոշակի ենթատեքստերի վերհանման ու բացահայտման, իսկ մյուս կողմից՝ դիտարկելու Նժդեհին որպես իր իսկ դարաշրջանի մտածող: Այս մոտեցումներն են, ըստ Ա. Սարգսյանի, որ հնարավորություն կընձեռեն ներկայացնելու այն հիմնական ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք առկա են Ի դարի գաղափարաքաղաքական կյանքի (տվյալ դեպքում նկատի ունենք ֆաշիզմի եւ նացիզմի գաղափարախոսությունները) եւ Նժդեհի ցեղակրոն ուսմունքի միջեւ: Հաճախ, միամիտ կամ միտումնավոր կերպով, Յեղակրոնությունը որակվում է որպես փոխառյալ ֆաշիզմ կամ նացիզմ: Երբ 1933 թ. Ն.Յ.Դ. Ընդհանուր Ժողովում Նժդեհին հարցրին՝ արդյոք իր քարոզածը ֆաշի՞զմ է, թե՞ հիտլերիզմ, նա պատասխանեց. «Իմ քարոզածը այդ վարդապետություններից ո՛չ մեկն է. ես կփափաքիմ ի հայտ բերել մեր պատմական հին հերոսությունները եւ հայ մշակույթի ծալքերը, որոնք փոշիներու տակ մնացած են»: Ֆաշիզմը ազգայնականության, ցեղապաշտության իտալական դրսեւորումն է, նացիզմը՝ գերմանական: Ծագումնաբանական առումով ցեղակրոնության, նացիզմի եւ ֆաշիզմի միջեւ կային ընդգծված ընդհանրություններ: Թեպետ ցեղակրոնության ընդհանուր դավանանքը, ընդհանուր ոգին հայրենապաշտական ուղղվածություն ուներ, ինչպես նաեւ կոչված էր համազգային, վերդասակարգային «ես»-ի ձեւավորմանը, որով էլ նմանվում էր ֆաշիզմի իտալական տարբերակին եւ գերմանական նացիոնալ-սոցիալիզմին, այնուամենայնիվ ուներ բնութագրական այնպիսի գծեր, որոնցով էապես տարբերվում էր թե՛ իտալական ֆաշիզմից, թե՛ նացիոնալ-սոցիալիզմից: Նժդեհի ուսմունքի եւ հիտլերականության ընդհանրությունը հիմնականում այն է, որ երկու դեպքում էլ, իբրեւ գերակա արժեք, հռչակված է տեսակը (ցեղը), ինչը բնորոշ է ցանկացած ազգայնական կամ ցեղապաշտական ուս-

4 **Գ. Նժդեհ,** Հատընտիր, Եր. Հայաստան,2001, էջ 304:

մունքի: Սակայն, էականը դրանց միջև առկա սկզբունքային տարբերություններն են, որոնցից կթվարկենք մի քանիսը: Հիտլերը Արիական ցեղը հռչակում է միակ մշակութաստեղծ ռասա, իսկ մնացած ազգերին՝ իբրև ստրորադաս տեսակներ: Նժդեհը զերծ է ընտրյալության կամ բացառիկության քարոզներից: Հիտլերը, այսպես կոչված «կենսական տարածքների» անհրաժեշտությամբ, փորձում է հիմնավորել ծավալապաշտությունը, որը, անպայմանորեն, դուրս է գալիս նաև հայրենիքի սահմաններից: Նժդեհը խնդիր է դնում մեր բուն հայրենիքի՝ Հայկական Բարձրավանդակի վերափիրումը: Հիտլերը հրեաներին դիտում է իբրև մարդկության չարիք, մշակութակործան տեսակ, եւ հակահրեականությունը նրա ուսմունքի մեջ գրավում է առանցքային տեղ: Նժդեհի մոտ այն իսպառ բացակայում է: Նա Ցեղի թշնամի է հռչակում թուրքին, քանզի վերջինս, հայության մի մասի ոչնչացմամբ, տիրել է մեր հայրենիքի մեծ մասին: Թերեւս, այսքանն էլ բավարար է նկատելու Ցեղակրոնության եւ նացիզմի ակնհայտ սկզբունքային տարբերությունները: Ինչպես Ա. Սարգսյանն է գրում, գիտակցելով օտար գաղափարախոսական համակարգերի (նացիոնալ-սոցիալիզմ) եւ ցեղակրոնության բովանդակային խորթությունը՝ Նժդեհը չէր կարող խուսափել բացասական վերաբերմունքից առ այն մոտեցումները, որոնք փորձում էին դրանց բովանդակությունների միջև «համագործակցության դաշտ» ստեղծել[5]: «Ցեղակրոն շարժումը, - գրում է Նժդեհը, - ոչ մի ընդհանուր բան չունի եւ չէր էլ կարող ունենալ օտար վարդապետությունների հետ, քանզի այն, նախ եւ առաջ, բարեփոխիչ շարժում-վերածնունդ է, որը հնարավոր է միայն սեփականն, այլ ոչ փոխառնված արժեքներով»[6]: Նժդեհի ցեղակրոն ուսմունքի սերտաճածության վերաբերյալ մեղադրանքները հիմնականում արդյունք են «անհատը միջոց է, ազգը՝ նպատակ» կարգախոսի, որը կարելի է հանդիպել նաեւ Նժդեհի ստեղծագործություններում: Նժդեհի բարոյափիլիսոփայական հայացքների վերլուծությանը նվիրված գլխում «անհատը միջոց է, ազգը՝ նպատակ» կարգախոսը լուրջ ուշադրության է արժանացել, որտեղ եւ ցույց է տրվել, որ նշյալ կարգախոսը Նժդեհի մոտ իմաստային միանգամայն այլ իմաստ ունի: Վերջին գործոնի անտեսումը, իհարկե, հնարավորություն է տալիս զուգահեռներ անցկացնել ֆաշիզմի եւ Նժդեհի ցեղակրոն ուսմունքի միջեւ՝ դրանք ներկայացնելով միեւնույն «լույսի» ներքո: Սակայն այսօրինակ մոտեցումներն արդարացված չեն, քանզի դրանք արդյունք են որոշ արտահայտությունների կամ դատողությունների զուտ ձեւական նույնացման: Թեպետ Նժդեհի համար անհատը միջոց էր, իսկ ազգը՝ նպատակ, այնուամենայնիվ, նրա համակրանքը ներքնապես ազատագրված, որպես անհատականություն հանդես եկող մարդու կողմն էր: Նժդեհի համար սակավարժեք էր ազգանվեր այն ծառայությունը, որն այս կամ այն անհատի կողմից իրականացվելու էր պարտադրված պարտականության տարբերակով, այլ ոչ ներքին համոզմունքով[7]: Նժդեհյան անհատը եթե պիտի ենթարկվեր կոլեկտիվին, ապա ոչ այն իմաստով, որ վերջինս պետք է իրականացնի կոլեկտիվի ներկայացրած պահանջները, ձուլվի կոլեկտիվին՝ կորցնելով սեփական դիմագիծը, հաճախ էլ առաջնորդվի ամբոխի հոգեբանությամբ՝ ասելով «այո» կամ «ոչ» այն ամենին, ինչին նույն կերպ մոտենում է ամբոխը կամ կոլեկտիվը: Ամբոխային կամ «հոտային» հոգեբանությունը նժդեհյան

5 **Ա.Ա. Սարգսյան,** Գարեգին Նժդեհի փիլիսոփայական հայացքները, էջ 120:
6 **Գ. Նժդեհ,** Հատընտիր, էջ 313:
7 Տես **Ա. Ա. Սարգսյան,** Գարեգին Նժդեհի փիլիսոփայական հայացքները , էջ 125:

անհատի համար էապես խորթ էր: Այդ անհատը իրեն պետք է ենթարկեր կոլեկտիվին, ազգին՝ որպես դրանց ճակատագրի նկատմամբ ոչ անտարբեր եւ գաղափարապաշտ էակ: Այսինքն՝ *այն, ինչ նա անում է, անում է հանուն ազգի, բայց ոչ այն պատճառով, որ իր ցանկությունից անկախ, բռնությամբ* «մատուցված է ազգի զոհասեղանին», *այլ այն պատճառով, որ ինքը* «մեծ ուրախությամբ եւ ժպիտը դեմքին» *իրեն նվիրաբերում է այդ զոհասեղանին*[8]:Անդրադառնալով անհատի զոհաբերության եւ ազգանվեր ծառայության նժդեհյան ըմբռնմանը՝ Ս. Զաքարյանը նշում է. «Նժդեհի նման հայացքները, որոնք որոշակի պատմական պայմանների ծնունդ են, իր ժամանակի համար արդարացված էին: Ազգի փրկությունը առանց զոհաբերության անհնարին է, դա առավելապես վերաբերում է այն ազգերին, որոնք լուծում են իրենց գոյատեւման ու ինքնության պահպանության խնդիրները: Այս համատեքստում դիտարկելով հարցը՝ Նժդեհը մի կողմ է դնում անհատի սոցիալական, կենսաբանական, տնտեսական պահանջմունքները. անհատի մարդկայնացման գործը նա պայմանավորում է այն բանով, թե նրանում որքանով է մարմնավորվել ազգայինը»[9]:

Թեպետ ցեղակրոնության եւ նացիզմի միջեւ կային արտաքին ընդգծված ընդհանրություններ, այնուամենայնիվ բովանդակային մակարդակում դրանք միմյանցից էապես տարբեր էին: Միտված լինելով ազգային ինքնության պահպանմանը՝ ցեղակրոնությունը հակված չէր հայ ժողովրդին ներկայացնելու բացառիկ պատմական առաքելություն մարմնավորողի կարգավիճակով: Նժդեհն իր ստեղծագործություններում ոչ միայն գովաբանում է հայ ժողովրդի պատմական անցյալի լուսավոր էջերը, մշակութային ձեռքբերումները, այլեւ առանձնահատուկ քննադատության է ենթարկում հայոց հոգեբարոյական նկարագրի մի շարք կողմեր[10]:Ցեղակրոնությունը, ի տարբերություն նացիզմի, չէր բովանդակում ծավալապաշտական նկրտումներ: «Իր «ցեղակրօնութիւնը», - գրված է «Հայրենիք» օրաթերթի խմբագրականում, - ատելութիւն թելադրող ցեղապաշտութիւնը չէր. ուրիշներէ բարձր ըլլալու եւ այդ ուրիշները արհամարհելու յաւակնոտութիւնը չէր. այլ, այն խորունկ համոզումը՝ թէ ուրիշներէ ետ կամ վար չենք. բարձր քաղաքակրթութիւն ունինք եւ ազգային արժանաւորութիւն: Իր քարոզած սկզբունքներու էութիւնն այն էր, թէ ստորադաս պէտք չէ համարինք մենք զմեզ. պիտի չշլանանք օտարին փայլէն. պիտի չենթադրենք թէ հետեւակ մնալու դատապարտուած ամբոխ ենք»[11]: Եթե նացիստական գաղափարախոսությունը ներթափանցված էր այլատյացության «հիմնավորումներով» (հակասեմականություն. հրեաներին դիտում էին մշակութակործան ազգ), ապա Նժդեհի ուսմունքում հակասեմականություն, ազգային այլատյացություն գոյություն չուներ: Բացառություն էին կազմում միայն թուրքերը, որոնց նկատմամբ ընդգծված բացասական վերաբերմունքն արդյունք էր դարասկզբի ցեղասպանության: Նժդեհի ցեղակրոն ուսմունքի ոչ ծավալապաշտական, ինքնապաշտպանական բնույթի մասին է վկայում նաեւ Ռ. Դարբինյանը: «Նժդեհը ցեղապաշտ էր, - գրում է վերջինս, - բայց ոչ Մուսոլինիի կամ Հիթլերի յարձակողական ու ծաւալողական իմաստով: Նժդեհին

8 Տե՛ս անդ, էջ 17:

9 **Ս. Զաքարյան,** Հայոց հոգեբարոյական նկարագրի Նժդեհյան վերլուծությունը, «Գարեգին Նժդեհ -115». (գիտաժողովների նյութեր), Եր. 2001, էջ 21:

10 Տե՛ս **Ս. Զաքարյան,** անդ, էջ 38-56:

11 **Գարեգին Նժդեհ,** «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1963, սեպտ. 13:

ցեղապաշտութիւնը այլ բան չէր, բայց եթէ պարզապէս հայ ազգի, հայ հայրենիքի մոլեգին պաշտամունքը, որ պաշտպանողական բնոյթ ունէր: Ինչպես նշում է Ա. Սարգսյանը, խուսափելով ազգայնամոլական կողմնորոշումների «գայթակղությունից»՝ Նժդեհը համադրական մոտեցում է ցուցաբերում ազգայինի եւ համամարդկայինի փոխհարաբերության հարցում[12]: «Ժողովուրդները, - գրում է Նժդեհը, - ապրում են իրենց՝ ստեղծագործում մարդկութեան համար: Ապրելու արժանի չէ միայն իրեն համար ապրողը: Ժողովուրդներն ստեղծագործելու պարտականութիւն ունեն - հեռեւաբար եւ ապրելու իրաւունք»[13]: Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ Նժդեհի տեսական ժառանգությունը ընդհանրապես եւ ցեղակրոնությունը մասնավորապես բովանդակային առումով ոչ մի էական ընդհանրություն չունեն ազգայնամոլական, նացիստական եւ ռասայական խտրականության կողմնորոշումներ սերմանող ուսմունքների հետ: Իսկ դրանց առնչակցությանը «հակված» մոտեցումներն արդյունք էին եւ արդյունք են կա՛մ համապատասխան քաղաքական շահարկումների, եւ կա՛մ այդ ուսմունքներում եւ ցեղակրոնության մեջ հանդիպող որոշ առանցքային հասկացությունների կամ գաղափարների զուտ արտաքին, ձեւական նույնացման:

12 Տե՛ս **Ա. Ա. Սարգսյան,** անդ, էջ 119:
13 **Գ. Նժդեհ,** Հայրենիքիր, էջ 68: